

Հայաստանեաց Աւետարանական Եկեղեցիի 175 ամեակի առիթով

2022-ի ամառը Հայաստանի մէջ տեղի պիտի ունենայ Հայ Աւետարանական երիտասարդաց համագումար:

Բազմաթիւ երիտասարդներ, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայէն, Միջին Արեւելքէն, Եւրոպայէն, եւ Աստրալիայէն կը միանան Հայաստանի եւ Արցախի երիտասարդներուն հայրենիքի մէջ, եւ Հնարաւորութիւն կ'ունենան լսելու Աստուծոյ մեզի վստահած առաքելութեան մասին եւ յետագային զայն կը գործնականացնեն իրենց եկեղեցիներուն մէջ:

Դուն՝ կրնաս անոր մաս կազմել:

Համագումարի Նպատակը

Հայ աւետարանական Համաշխարհային խորհուրդը Հ.Ա.Ե. 175 ամեակի առիթով կը հետապնդէ հետեւեալ նպատակները:

- Հայրենիքի մէջ գոհաբանութիւն բարձրացնել առ Աստուած Հ.Ա.Ե. 175 տարիներու անգնահատելի գործունէութեան համար:
- Ամրապնդել աշխարհի մէջ սփռուած Աւետարանական երիտասարդներու կապը իրենց եւ հայրենիքի միջև:
- Վերահաստատել Հ.Ա.Ե. գոյութեան նպատակը:

Սորվելու եւ աճելու հնարաւորութիւն

Սորվիլ Աստուծոյ խօսքը եւ անորմէ բխած մարտահրաւերները ուղղուած Հայ երիտասարդներուն:

Գանք՝ պատրաստ ըլլալով լսելու, սորվելու եւ բացատրելու թէ որն է Աստուծոյ կամքը Աւետարանական եկեղեցիի համար այսօր եւ ապագային, եւ որպէս երիտասարդներ ինչպէս կրնանք մաս կազմել այդ տեսիլքին:



«Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը, վասն զի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ»:

Եբր. 10:23

Ծրագիրը

Կ'ընդգրկէ համագումար Հանքաւանում, հաղորդակցութիւն եւ ռազմավարութեան մշակում, այցելութիւն պատմական վայրերու, 175 ամեակի նուիրուած պաշտամունք եւ մշակութային միջոցառում:

Ընդհանուր ծրագիրը հետևեալն է:

- **Յունիս 29, 30**
Ժամանում եւ տեղաւորում հիւրանոցներու մէջ
- **Յունիս 1**
Մշակութային միջոցառում Երեւանի մէջ
- **Յունիս 2-5**
Համագումար AMAA-ի Հանքաւանի «Շողիկ» ճամբարի մէջ
- **Յունիս 6-8**
Շրջագայութիւն պատմական վայրեր
- **Յունիս 9**
Ազատ օր
- **Յունիս 10**
Մեկնում Հայաստանէն